

ԱԶԴԱԿ

ՕՐԾՈՒԹՅՈՒՆ



ԽՄԲԱԳՐԱՎԱՆ

ՀԱՐՑԱԽՈՅՉՔԸ ԻԲՐԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՐԳ ԵՒ ՈՒՂԵՆԻԾ

«Ազդակ»-ի 95-ամեակի ծրագիրներուն մաս կը կազմեր հարցախոյզի իրականացումը իբրեւ նոր միջոց՝ խմբագրական քաղաքականութեան վերանայման համար: Վիճակագրութիւնները, հարցախոյզերը ժամանակ առ ժամանակ կ'իրականացնեն պետութիւններ, կազմակերպութիւններ, հաստատութիւններ՝ իրենց ծրագիրներու եւ ռազմավարութիւններու վերամշակման համար:

Հարցախոյզի արդիւնքներուն հետ հաշուի նստիլը առարկայական մօտեցումի գերադասում է եւ գաղափարախօսական առումով նաեւ աւելի ժողովրդավար՝ գործի ռեկավարման համակարգին համար:

Այդ արդիւնքները կրնան անպայման չհամընկնիլ «Ազդակ»-ի տնօրենութեան խմբագրական, լրատուական կամ ընդհանրապես էշերու բովանդակութեան պատասխանատուններու նախասիրութիւններուն, առաջնահերթութիւններուն: Անոնք կողմնորոշիչ ազդեցութիւն ունենալու հանգամանքը ունին սակայն, եթէ այս պարագային մեր թերթի հետագայ աշխատանքները պիտի փորձենք ընթերցողին կատարած մատնանշումներուն, առաջարկներուն եւ նկատողութիւններուն ընդառաջ կազմակերպել:

Այսօր աւելի հեշտացած են նման հարցախոյզեր կազմակերպելու մեթոսները: Առցանց հարթակը կը խնայէ անձ առ անձ հանդիպումներու ժամանակը եւ հարիւրաւոր ընթերցող կրնայ համախմբել հեռավար դրութիւններով:

Այս աշխատակարգը նաեւ երիտասարդութեան ներգրաւում կ'ենթադրէ: Թէ՛ հարցաշարք պատրաստողը, թէ՛ համակարգային նման ծրագրաւորում ապահովողը, թէ՛ այդ հարթակին տարածումը կատարողը, եւ թէ՛, ինչո՞ւ չէ, մասնակիցներուն կարեւոր համախմբել հեռավար դրութիւններով:

համեմատութիւնը երիտասարդ խաւին մաս կը կազմեն:

Առցանցն ու համակարգչային ծրագիրը երիտասարդական ուղղութիւններ են, արդիական են, հետեւաբար նաեւ՝ ժամանակին համահունչ:

Սեծ է գոհունակութիւնը «Ազդակ»-ին համար, որ մեր երիտասարդ աշխատակիցներու խումբը տենդագին լծուեցաւ այս աշխատանքին եւ իրականացուց զայն ամիսներու տեւողութեան ընթացքին: Սեր երիտասարդները նախապատրաստեցին հարցաշարք, որդեգրեցին ամենեն գործնական ծրագիրը, տարածեցին մասնակցելու կապը, դիմեցին տարբեր երիտասարդական շրջանակներու, իրականացուցին հարցախոյզը եւ այդ բոլորն ետք, մանաւանդ, պատրաստեցին մեզի համար ուղենիշ նկատող այս թղթածրարը:

95-ամեակի կարեւորագոյն իրագործումն էր այս մեկը, որուն կը ծանօթանայ «Ազդակ»-ի ընթերցողը: Կը խորիինք, որ այս առաջին փորձն է, որովհետեւ ժամանակի առընթեր կը փոխուին հետաքրքրութիւնները, նախասիրութիւնները, առաջնահերթութիւնները: Ժամանակի առընթեր կու գան երիտասարդ ընթերցողի նոր սերունդներ: Ժամանակի առընթեր կը պատրաստուին առցանց հարցախոյզեր կազմակերպողներն ու վիճակագրագետները:

Այս բոլոր պատճառներով ուղենշային է այս ծրագիրը, որովհետեւ հեռանկարային է նաեւ: Այս գործը բացառապես երիտասարդներու գործ է, եւ մենք պարտաւոր ենք հաշուի նստիլ մեր երիտասարդներուն մեզի հրամցուցած թղթածրարի արձանագրած արդիւնքներուն հետ:

28 ԵՐԿԻՐՆԵՐԷ 264 ԱՆՁԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ՝

«ԱԶԴԱԿ»-ԻՆ ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ՆԱԵՒ՝ ԱՆՈՆՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Փաստուած է, որ կազմակերպութեան մը ապագայի յաջողութեան երաշխիքը անոր այսօրուան ու անցեալի աշխատանքներու արժեւորումն է: Այս սկզբունքըն մեկնելով՝ «Ազդակ»-ի տնօրենութիւնը իր 95-ամեակին առիթով, խումը մը երիտասարդներու նախաձեռնութեամբ, որոշեց պատրաստել հարցախոյզ մը՝ արժեւորելու համար օրաթերթին այսօրուան գործունեութիւնը: Այս հարցախոյզի արդիւնքներուն հիման վրայ տնօրենութիւնը պիտի յաջողի իր ընթերցողներուն կարծիքները ներառել յառաջիկայ աշխատանքներուն, թերթին ռազմավարութեան եւ աշխատելառճին առնչուող որոշումներուն մէջ:

Այս ուսումնասիրութեան համար պատրաստուեցաւ հարցարան

մը, որ կը բաղկանար զանազան հարցումներէ: Հարցարանը թուայնացուեցաւ եւ տարածուեցաւ առցանց՝ վիճակագրական նպատակներու եւ տեղեկահաւաքի համար յատուկ օգտագործուող «Kobo Toolbox» կայքին միջոցով: Հարցարանը հանրութեան տրամադրութեան տակ դրուեցաւ ընկերային ցանցերու եւ WhatsApp-ի ճամրով ուղարկուած նամակներու միջոցով:

Տեղեկահաւաքի համար նախապես նախատեսուած ժամանակահատուածք բաւարար եղաւ հաւաքելու պէտք եղած մասնակցներու թիւը: Նախատեսուած ժամանակահատուածքը կ'երկարէր 15 սեպտեմբեր 2021-ին մինչեւ 15 փետրուար 2022:

Հարցախոյզին մասնակցեցան 28 երկիրներէ 264 անձեր:

ԱՖՀԻԼ



AFHIL

Since 1998

www.afhil.com | [AFHIL Mutual Fund](#)

Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556 /7


ԱՐԴԻՒՆՔՆԵՐ**1. «Ազդակ» օրաթերթի ընթերցո՞ղ ես:**

Այս հարցումին պատասխանած են 264 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Այո» եւ «Ոչ»: «Ոչ» պատասխանող մասնակիցները առիթը ունեն բացատրելու, թե ինչո՞ւ անոնք «Ազդակ» չեն կարդար: Այս հարցումը ուներ երկու հիմնական նպատակ. նախ՝ ճշգրիտ արժենուրում մը ունենալու համար պետք էր հարցախոյզին մնացեալ հարցումներուն պատասխանեին միայն օրաթերթին բովանդակութեան ծանօթ անհատներ, իսկ երկրորդ՝ հասկնալու համար, թե «Ոչ» պատասխանողները ինչո՞ւ չեն կարդար օրաթերթը: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Մասնակցողներէն 231-ը (87,5 առ հարիւր) պատասխանած է «Այո», իսկ մասցեալ 33-ը (12,5 առ հարիւր)՝ «Ոչ»: Չկարդացնողներէն ոմանք նշած են, որ անոնք «Ազդակ» չեն կարդար բազմազբաղութեան պատճառով: Ուրիշներ օրաթերթը չեն կարդար, որովհետեւ անոնց հասանելի չեն, եւ անոնցմէ շատեր առաջարկած են, որ ստեղծուի Newsletter-ի՝ օրաթերթին բովանդակութիւնը առօրեայ ձեւով ենամակի ճամբով ուղարկելու դրութիւն մը: Այլ մասնակիցներ, յատկապես՝ Լիբանանին դուրս ապրող անհատներ, ըսած են, որ կը կարդան իրենց երկիրներուն մէջ լոյս տեսած այլ հայերէն թերթեր: Կային նաեւ մասնակիցներ, որոնք նշած են, թե նկատի առնելով, որ «Ազդակ»-ը Հայ յեղափոխական դաշնակցութեան Լիբանանի Կերորնական կոմիտեին պաշտօնաթերթն է, այնտեղ լոյս կը տեսնեն կողմնակալ, որոշ քաղաքական ուղղութիւն ունեցող միտքեր ու յօդուածներ, եւ այդ պատճառով անոնք կը խուսափին օրաթերթը կարդալ:

2. Ո՞ր երկիրը կը բնակի:

Ինչպէս վերը նշուած է, հարցախոյզին իրենց մասնակցութիւնը բերած են 28 տարբեր երկիրներու մէջ բնակութիւն հաստատած անհատներ: Մասնակիցներուն մեծ մասը Լիբանան կը բնակի: Լիբանան բնակող մասնակցողներուն թիւը 110 էր, որ կը կազմէր ընդհանուր մասնակցողներու 47,62 առ հարիւրը: Միացեալ Նահանգներ բնակող մասնակիցներուն թիւը 32




էր (13,85 առ հարիւր), Յայաստան՝ 25 (10,39 առ հարիւր), Ջանատա՝ 14 (6,06 առ հարիւր), Սուլրիա՝ 5 (2,16 առ հարիւր), Արցանթէիլ՝ 5 (2,16 առ հարիւր), Աւստրալիա՝ 5 (2,16 առ հարիւր): Մասցեալ իրաքանչիւր երկիրի մէջ բնակութիւն հաստատած մասնակիցներուն թիւը 5-էն վար էր, արձանագրութեան նպատակով երկիրներուն անունները կը հրապարակենք առանց մանրամասնելու իրաքանչիւրին մասին՝ Յունաստան, Ֆրանսա, Չուեյթ, Եգիպտոս, Գերմանիա, Նոր Զելանտա, Կիպրոս, Արցախ, Շուշի, Թուրքիա, Իրաք, Հունգարիա, Լեհաստան, գրաւեալ Պաղեստին (Երուսաղէմ), Փորթօնգալ, Ուրուկուեյ, Սեռտական Արաբիա, Իտալիա, Աւստրիա, Միացեալ Թագաւորութիւն եւ Յորդանան:

3. Քանի՞ տարեկան ես:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «<16», «17-35», «36-55», եւ «56+» տարիքային բաժանումները: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

**Հարցախոյզին Մասնակիցներուն թիւը
Ըստ Վնանց Տարիքային Բաժանումին**



Մասնակցողներէն 108-ը (46,75 առ հարիւր) կը գտնուի 56+ տարիքային բաժանումին մէջ, 88-ը (38,1 առ հարիւր)՝ 36-էն 55, 34-ը (14,72 առ հարիւր)՝ 17-էն 35, իսկ մասցեալ՝ 1-ը 16-էն վար տարիքային բաժանումին մէջ:

4. Ո՞ր սերին կը պատկանիս:


Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Արական» կամ «Իզա-

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈԲ ԵՒ ԹԱԼԻՆ ԳԼՊԱՆԵԱՆ

Կը մասնակին այս թիւին իրատարակութեան



կան»: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:



Մասնակցողներու 141-ը (61,04 առ հարիւր) կը պատկանի արական սեռին, իսկ 90-ը (38,96 առ հարիւր)՝ իգական:

5. Նշե՛ ուսմանդ մակարդակը:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Համալսարան (պա-

կաւորի վկայական)», «Մագիստրոս», «Դոկտորա», «Երկրորդական», «Միջնակարգ», «Նախակրթարան» կամ «Այլ» պատասխանները: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:


88 մասնակիցներ (38,1 առ հարիւր) համալսարանական են կամ ուսին համալսարանի պասկաւորի վկայական: Անոնցմէ 60-ը (25,97 առ հարիւր)՝ մագիստրոս, 32 (13,85 առ հարիւր)՝ դոկտորա, 31-ը (13,42 առ հարիւր)՝ երկրորդական, 14-ը (6,06 առ հարիւր)՝ միջնակարգ, 2-ը (0,87 առ հարիւր)՝ նախակրթարան, իսկ մնացեալ 4-ը ընտրած են «այլ» պատասխանը:

6. Ի՞նչ գործով կը զբաղի:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: 231-Են 12-ը (5,19 առ հարիւր) կ'աշխատի IT-ի, ծրագրաւորումի, software engineering, development, website design-ի ոլորտին մեջ: Անոնցմէ 51-ը (22,07 առ հարիւր) զանազան հաստատութիւններու մեջ տարբեր պաշտօն կը վարէ իբրեւ պաշտօնեայ: 38-ը (16,45 առ հարիւր) համալսարաններու մեջ դասախոսներ են կամ ընդհանրապէս ուսուցչական/կրթական



Մասնակիցներուն Ուսման Մակարդակը



L'ORA
JEWELRY OF THE MOMENTY

BY
GARABET K JABOTIAN

MOBILE: +961 70 988 888
TEL: + 961 1 249 000
FAX: +961 1 249 200
GARO@JABOTIAN.COM

BOURJ HAMOUD, BANK CREDIT
LIBANAIS BLDG.
1ST FLOOR BEIRUT, LEBANON

WWW.JABOTIAN.COM


մարզին մեջ կ'աշխատի: 5-ը (2,16 առ հարիւր) կղերական, հոգեւորական կամ աստուածաբանական աշխատանքներ կը տանի: 19-ը (8,23 առ հարիւր) լրագրութեան, մամուլի, հրատարակչական եւ թարգմանական աշխատանքներով կը զբաղի: 27-ը (11,69 առ հարիւր) հանգստեան կոչուած են: 14-ը (6,06 առ հարիւր) չ'աշխատիր կամ չէ ուզած նշել իր աշխատանքները: 9-ը (3,90 առ հարիւր) առողջապահական մարզին մեջ կ'աշխատի՝ որպես հիւանդապահ, բժիշկ, ատամաբուժ եւ այլն: 7-ը՝ (3,03 առ հարիւր) մարդասիրական, հասարակական կազմակերպութիւններու կամ ընկերային ծառայութեան ոլորտին մեջ: 12-ը (5,19 առ հարիւր) առեւտուրով կը զբաղի: 9-ը (3,90 առ հարիւր)՝ ճարտարագիտութեամբ, երկրագործութեամբ, երկրաչափութեամբ եւ գիւղատնտեսութեամբ: 9-ը (3,90 առ հարիւր) արհեստաւոր է: Իսկ մնացեալ 18-ը այլ գործերով կը զբաղի կամ դեռ իր ուսումը կը շարունակէ:

7. «Ազդակ»-ի ո՞ր տարբերակը կը կարդաս:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Առցանց», «Տպագիր» կամ «Երկուքը» պատասխանները: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակցողներէն 161-ը (69,70 առ հարիւր) կը կարդայ միայն առցանց տարբերակը, անոնցմէ միայն 22-ը (9,52 առ հարիւր) կը կարդայ տպագիր տարբերակը, իսկ անոնցմէ 48-ը (20,78 առ հարիւր) կը կարդայ երկուքը: Յոս պետք է նշել, որ այս հարցախոյզը կատարուեցաւ առցանց, հետեւաբար այս հարցումին պատասխանները կրնան ըլլալ ոչ ներկայացուցչական: Յաւանական է, որ տպագիր կարդացողներէն շատեր ինարաւորութիւնը, կարողութիւնը կամ իմացութիւնը չունին

«Ազդակ»-ի ո՞ր տարբերակը կը կարդաս



առցանց աշխարհին մեջ ընթերցելու կամ նման հարցարաններու պատասխաննելու:

8. Ի՞նչ յաճախականութեամբ «Ազդակ» կը կարդաս:


Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Ամեն օր», «Ամիսը անգամ մը», «Ամիսը քանի մը անգամ», «Ճարագալ քանի մը անգամ», կամ «Տարին քանի մը անգամ» պատասխանները: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

YESSAYAN
J E W E L R Y

www.yessayan.com

ԱԶԴԱԿ

Ի՞նչ յաճախականութեամբ «Ազդակ» կը կարդաս:



231 մասնակցողներէն 104-ը (45,02 առ հարիւր) «Ազդակ» կը կարդայ առօրեայ դրութեամբ, 25-ը (10,82 առ հարիւր)՝ ամիսը քանի մը անգամ, 91-ը (39,39 առ հարիւր)՝ շաբաթը քանի մը անգամ, 7-ը (3,03 առ հարիւր)՝ տարին քանի մը անգամ, իսկ մնացեալ 4-ը (1,74 առ հարիւր)՝ ամիսը անգամ մը:

9. «Ազդակ» կարդալ՝ կը նշանակէ.


Այս հարցումին նպատակն էր նախորդ հարցումին աւելի յստակ պատկեր մը տալը: Յո՞ս կարելի պիտի ըլլայ հասկնալ, թէ ընթերցողները ի՞նչ նկատի ունին, երբ անոնք կ'ըսեն՝ կը կարդան «Ազդակ»:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Կարդալ թերթը ծայրէ ծայր՝ իր բոլոր մասերով», «Կարդալ կարգ մը յօդուածներ/յայտարարութիւններ», «Կարդալ միայն վերնագիրներ», կամ «Կարդալ որոշ էջեր միայն» պատասխանները: Յարցախոյզին աւարտին մասնակցներու պատասխաններուն արդիւնքը կը

ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակցներէն 31-ը (13,42 առ հարիւր) թերթը կը կարդայ ծայրէ ծայր՝ իր բոլոր մասերով: 145-ը (62,77 առ հարիւր) կը կարդայ կարգ մը յօդուածներ կամ յայտարարութիւններ: 5-ը (2,16 առ հարիւր) կը կարդայ միայն վերնագիրները, իսկ 50-ը (21,65 առ հարիւր) կը կարդայ միայն որոշ էջեր:

«Ազդակ» կարդալ կը նշանակէ



- Կարդալ թերթը ծայրէ ծայր՝ իր բոլոր մասերով
- Կարդալ կարգ մը յօդուածներ/յայտարարութիւններ
- Կարդալ միայն վերնագիրներ
- Կարդալ որոշ էջեր միայն

10. Տպագիր տարբերակը՝

Այս հարցումին պատասխանեցին բոլոր անոնք, որոնք 7-րդ հարցումին («Ազդակ»-ի ո՞ր տարբերակը կը կարդաս) մէջ ընտրած են «Տպագիր» եւ «Երկութը» հաւանական պատասխանները: Ուրեմն այս հարցումին իրենց մասնակցութիւնը բերած են հարցախոյզին մասնակցող անհատներէն 70-ը:

Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Կը գնես», «Տրամադրութ է անդամակցած միութեանդ կեդրոնին մէջ», «Տրա-

**NEW PROJECT
IN YEREVAN
NORK MARASH**

**SAHALCO
CONSTRUCTIONS**

Sarkis & Hagop Loussararian
03 - 201957 / 67 TEL/FAX : 04 / 712409
www.sahalco.com

BIACOUT HILLS
2 , 3 & 4 BEDROOMS
3 BEDROOM DUPLEX

Almira
Հաստատովմինը

*Լաւագոյն սակ
Լաւագոյն որակ*

Պուրճ Համուտ - Արարս
Հեռ. 01/268375



Մաղրուած է աշխատած տեղի՝ կամ «Այլ՝ նշե» պատասխաները: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաներուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

70 մասնակիցներէն 36-ը կը գնէ «Ազդակ»-ը գրախանութերէ կամ բաժանորդագրութեամբ: Այս 36 մասնակցողներէն 12-ը թերթը կը գնէն գրախանութերէ: 70-էն 11-ը ընտրած է «Տրամադրուած է անդամակցած միութեանդ կեդրոնին մէջ», անոնցմէ 19-ին օրաթերթը կը տրամադրուի աշխատանքի վայրին մէջ, իսկ 10-ն ընտրած է «Այլ՝ նշե» պատասխանը: «Այլ՝ նշե» պատասխանը ընտրողները «Ազդակ»-ը ձեռք կը ձգեն իրենց բարեկամներէն, ընկերներէն կամ դրացիներէն, որոնք իրենց կարգին կը գնէն կամ բաժանորդագրուած են «Ազդակ»-ին:

11. Կարեւոր կը նկատե՞ս տակաւին տպագիր տարբերակ ունեալը:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրև պատասխան՝ կարելի էր ընտրել «Այ» կամ «Ոչ»: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը. ըստ ընտրուած պատասխանին, մասնակցողները առիթը ունեին հիմնաւորելու իրենց պատասխանները:

231 մասնակիցներէն 150-ը (64,94 առ հարիւր) կը հաւատայ, որ պէտք է պահել «Ազդակ»-ի տպագիր տարբերակը, իսկ մասցեալ 81-ը՝ ոչ:


Բոլոր 231 մասնակիցները առիթ ունեին հիմնաւորելու իրենց պատասխանները: Տպագիր տարբերակը տակաւին պահելու կողմանակից մասնակիցներէն 115-ը հիմնաւորած է իր պատասխանը: Մեծամասնութիւնը ըսած է, որ տարբեր հարազատութիւն մը կը զգայ տպագիր տարբերակը ընթերցելու ընթացքին: Անոնցմէ ոմանք տպագիր տարբերակի պահպանումը կարեւոր կը նկատեն արիսիւային նպատակներու համար: Այս հիմնաւորումները տուողները նաեւ նշած են, որ տպագիր տարբերակի թուաքանակը պէտք է նուազեցնել եւ բամնել գրադարաններու, միութիւններու, կրթական հաստատութիւններու, որոնք, որպէս արիսի, թերթը կրնան պահել իրենց գրադարաններուն մէջ: Ոմանք կը հաւատան, որ տպագիր տարբերակը կարեւոր է երեւ սերունդին համար, եւ իրենց կարծիքով, այդ սերունդը տպագիր տարբերակէն բացի՝ այլ միջոց չունի հայկական լուրերով հաղորդուելու:

Տպագիր տարբերակը պահելու դեմ արտայայտուող մասնակիցներէն 57-ը հիմնաւորած է իր պատասխանը: Անոնց մեծամասնութիւնը տպագիր տարբերակի պահպանումը կը նկատէ նիւթական մշտում, մասնաւանդ 21-րդ դարուն, երբ համաշխարհային մակարդակով մարդկութիւնը կը ձգտի աւելի նորարար, արդիական եւ դիւրամատչելի միջոցներ որդեգրելու: Անոնցմէ ուսանք, մասնաւանդ անոնք, որոնք կը գտնուին Լիբանանէն դուրս, «Ազդակ»-ը կը տեսնեն որպէս համայն հայութեան թերթը, որ, Լիբանանը իբրեւ հիմնական կեդրոն ունենալով հանդերձ, հանրութեան կը ներկայացնէ աշխարհի բոլոր հայերը հետաքրքրող եւ անոնց առնչուող նիւթեր:

12. «Ազդակ» օրաթերթի բջիջային ծրագիրը ունի՞ս:

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրև պատասխան՝ կարելի էր ընտրել «Այ» կամ «Ոչ»: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

«Ազդակ» օրաթերթի բջիջային ծրագիրը ունի՞ս



231 մասնակիցներէն 108-ը (46,75 առ հարիւր) ներբեռնած է «Ազդակ»-ի բջիջային հեռածայնի ծրագիրը, իսկ 123-ը (53,25 առ հարիւր)՝ ոչ:

Ըստ հարցախոյզի արդիւսքին, «Այ» պատասխանը ընտրող մասնակիցներուն մեծամասնութիւնը «Ազդակ»-ի բջիջային հեռածայնի ծրագիրէն կ'օգտուի արագ լրահոսի լուրերուն հետեւելու, իսկ անոնցմէ փոքր համեմատութիւն մըն ալ զայն կ'օգտագործէ թերթէն յատուկ բաժիններ ընթերցելու համար:

13. «Ազդակ»-ի յօդուածները կը կարդա՞ն (կրնաս ընտրել քանի մը պատասխան):

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրև պատասխան՝ կարելի էր ընտրել «Ըստ հեղինակի», «Ըստ

GARO BODROUMAN
ԿԱՐՈ ՊՈՏՐՈՒՄԵԱՆ
ԹԱՂԱՎԱՐԿՈՒԹԻՒՆ
FUNERAL SERVICES

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂ
03 - 355 472

ԱԶԴԱԿ

ՅՈՒՆԻՉՆԵՐ ▼ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

Անդրադարձ

Գաղութային

Հարցազրոյց

Հայրենի Կեանք

Գաղութէ Գաղութ

Զաւարեանական

Միջազգային

Հայ Դատ

նիւթի», «Ըստ յօդուածի ծաւալին» եւ «Բոլոր յօդուածները կը կարդամ անխտիր» պատասխանները: Ինչպէս հարցումին մէջ արդեն յստակ է, մասնակիցները հնարաւորութիւնը ունեին ընտրելու մէկ աւելի պատասխաններ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.


231 մասնակիցներէն 19-ը (8,23 առ հարիւր) կը կարդայ թերթին մէջ լոյս տեսած բոլոր յօդուածները անխտիր: 231-էն միայն 3-ը (1,3 առ հարիւր) յօդուածները կը կարդայ ըստ յօդուածին հեղինակին, 7-ը (3,03 առ հարիւր) միայն ըստ յօդուածի ծաւալին, իսկ 115-ը (49,78 առ հարիւր)՝ ըստ նիւթին: Մնացեալ 87 մասնակիցները (37,66 առ հարիւր) յօդուածները կարդալ կամ չկարդալ կ'որոշեն միեւնոյն ժամանակ նայելով յօդուածի հեղինակին, անոր արծարծած նիւթին եւ յօդուածի ծաւալին:

14. Յօդուածներուն նիւթերը կը գտնես...

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Հայկական լուրեր», «Անդրադարձ/յօդուածներ», «Հայրենի կեանք», «Լիբանանաւան կեանք», «Գաղութէ գաղութ», «Միջազգային-քաղաքական կեանք», «Կոնջական», «Մանկապատանեկան», «Մարզաշխարհ» եւ «Այլ» պատասխանները: Ինչպէս որ հարցումին մէջ նշուած է, մասնակցողը առիթը ուներ ընտրելու մէկ աւելի պատասխաններ (առաւելագոյնը՝ երեք): «Այլ» հաւանական պատասխանը ընտրողները առիթը ունեին նշելու իրենց համար ամենեն հետաքրքրական թուող բաժինը: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Ըստ հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Հայկական լուրեր», «Անդրադարձ/յօդուածներ», «Հայրենի կեանք», «Լիբանանաւան կեանք», «Գաղութէ գաղութ», «Միջազգային-քաղաքական կեանք», «Կոնջական», «Մանկապատանեկան», «Մարզաշխարհ» եւ «Այլ» պատասխանները: Ինչպէս որ հարցումին մէջ նշուած է, մասնակցողը առիթը ուներ ընտրելու մէկ աւելի պատասխաններ (առաւելագոյնը՝ երեք): «Այլ» հաւանական պատասխանը ընտրողները առիթը ունեին նշելու իրենց համար ամենեն հետաքրքրական թուող բաժինը: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Մասնակիցները Յօդուածները Կը Գտնեն՝



231 մասնակիցներէն 21-ը (9,09 առ հարիւր) «Ազդակ»-ի մէջ լոյս տեսած յօդուածներուն նիւթերը կը գտնե շատ հետաքրքրական: 231-էն 113-ը (48,92 առ հարիւր) յօդուածներուն նիւթերը կը գտնե հետաքրքրական, 91-ը (39,39 առ հարիւր)` որոշ չափով հետաքրքրական, իսկ 6-ը (2,6 առ հարիւր)` ոչ հետաքրքրական:


15. «Ազդակ»-ի մէջ ամենեն հետաքրքրական բաժինը կը հանդիսանայ (ընտրել երեք ամենեն հետաքրքրական բաժինները):

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Հայկական լուրեր», «Անդրադարձ/յօդուածներ», «Հայրենի կեանք», «Լիբանանաւան կեանք», «Գաղութէ գաղութ», «Միջազգային-քաղաքական կեանք», «Կոնջական», «Մանկապատանեկան», «Մարզաշխարհ» եւ «Այլ» պատասխանները: Ինչպէս որ հարցումին մէջ նշուած է, մասնակցողը առիթը ուներ ընտրելու մէկ աւելի պատասխաններ (առաւելագոյնը՝ երեք): «Այլ» հաւանական պատասխանը ընտրողները առիթը ունեին նշելու իրենց համար ամենեն հետաքրքրական թուող բաժինը: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Ըստ հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Իբրեւ պատասխան՝ կարելի էր ընտրել «Հայկական լուրեր», «Անդրադարձ/յօդուածներ», «Հայրենի կեանք», «Լիբանանաւան կեանք», «Գաղութէ գաղութ», «Միջազգային-քաղաքական կեանք», «Կոնջական», «Մանկապատանեկան», «Մարզաշխարհ» եւ «Այլ» պատասխանները: Ինչպէս որ հարցումին մէջ նշուած է, մասնակցողը առիթը ուներ ընտրելու մէկ աւելի պատասխաններ (առաւելագոյնը՝ երեք): «Այլ» հաւանական պատասխանը ընտրողները առիթը ունեին նշելու իրենց համար ամենեն հետաքրքրական թուող բաժինը: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.



FOR FURTHER INFO OR APPOINTMENTS CALL
01566222 EXT:204



Ները կը հանդիսանա՞ «Հայկական լուրեր» (154 մասնակից), «Անդրադարձ/յօդուածներ» (135 մասնակից), եւ «Հայրենի կեանք» (80 մասնակից): Անոնց կը յաջորդեն մասցեալ բաժինները հետեւեալ կարգով՝ «Լիբանանեան կեանք» (70 մասնակից), «Գաղութե գաղութ» (67 մասնակից), «Միջազգային-քաղաքական կեանք» (61 մասնակից), «Կնոջական» (21 մասնակից), «Մանկապատանեկան» (19 մասնակից), «Մարզաշխարհ» (14 մասնակից), իսկ «Այլ» ընտրող մասնակիցներուն թիւ 10-ն էր, որուն 50 առ հարիւր նշած է, որ ամենըն հետաքրքրական բաժինը բարխաղի բաժինն է:


16. Իւրաքանչիւր նախադասութեան համար ընտրէ մեկ պատասխան՝ «Ծատ համաձայն Եմ», «Համաձայն Եմ», «Կողմնորոշուած չեմ», «Որոշ չափով համաձայն Եմ» եւ «Բնաւ համաձայն չեմ»:

Ա. «Ազդակ»-ի խմբագրականները անհրաժեշտ չափով կ'անդրադառնան օրուան խնդիրներուն

Այս հարցումին պատասխանած էն 231 մասնակիցներ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներէն 23-ը (9,96 առ հարիւր) ընտրած է «Ծատ համաձայն Եմ» պատասխանը, 106-ը (45,89 առ հարիւր)` «Համաձայն Եմ», 36-ը (15,58 առ հարիւր)` «Կողմնորոշուած չեմ», 62-ը (26,84 առ հարիւր)` «Որոշ չափով համաձայն Եմ», իսկ մնացեալ 4-ը (1,73 առ հարիւր)` «Բնաւ համաձայն չեմ»:

«Ազդակ»-ի խմբագրականները անհրաժեշտ չափով կ'անդրադառնան օրուան խնդիրներուն



- Ծատ համաձայն Եմ
- Համաձայն Եմ
- Կողմնորոշուած չեմ
- Որոշ չափով համաձայն Եմ
- Բնաւ համաձայն չեմ

TOSHIBA
W White-Westinghouse
SENCOR

UNILEC
Հաստատութիւն




ԱԶԴԱԿ

Բ. «Ազդակ»-ի լրատուութիւնը այժմեական է

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

«Ազդակ»-ի լրատուութիւնը այժմեական է




231 մասնակիցներին 23-ը (9,96 առ հարիւր) ընտրած է «Չատ համաձայն եմ» պատասխանը, 124-ը (53,68 առ հարիւր)` «Չամաձայն եմ», 16-ը (6,93 առ հարիւր)` «Կողմանորոշուած չեմ», 63-ը (27,27 առ հարիւր)` «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 5-ը (2,16 առ հարիւր)` «Բնաւ համաձայն չեմ»:

Գ. «Ազդակ»-ի կողմէ գաղութային իրադարձութիւններուն անդրադարձը գոհացուցիչ է

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ:

Հարցախոյզի աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

«Ազդակ»-ի կողմէ գաղութային իրադարձութիւններուն անդրադարձը գոհացուցիչ է



231 մասնակիցներին 20-ը (8,66 առ հարիւր) ընտրած է «Չատ համաձայն եմ» պատասխանը, 118-ը (51,08 առ հարիւր)` «Չամաձայն եմ», 20-ը (8,66 առ հարիւր)` «Կողմանորոշուած չեմ», 66-ը (28,57 առ հարիւր)` «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 7-ը (3,03 առ հարիւր)` «Բնաւ համաձայն չեմ»:

JACK GIFTS
COSMETICA

Bourj Hammoud - Main Entrance
 SALES OF PERFUMES & COSMETICS
wholesale & retail
 01/263592 - 245592 - 249105


BALTAYAN
 electric

Dora, Armenia street
 Makateb Hadissa building
Tel.: 01/261800

Դ. «Ազդակ» օրաթերթը գաղութին նկարագիրին մաս կը կազմէ

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Յարցախոյզի աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդինքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

«Ազդակ» օրաթերթը գաղութին նկարագիրին մաս կը կազմէ



- Համաձայն եմ
- Որոշ չափով համաձայն եմ
- Կողմանորոշուած չեմ
- Բնաւ համաձայն չեմ

231 մասնակիցներն 64-ը (27,71 առ հարիւր) ընտրած ե «Հատ համաձայն եմ» պատասխանը, 110-ը (47,62 առ հարիւր)` «Համաձայն եմ», 14-ը (6,06 առ հարիւր)` «Կողմանորոշուած չեմ», 38-ը (16,45 առ հարիւր)` «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 5-ը (2,16 առ հարիւր)` «Բնաւ համաձայն չեմ»:

Ե. «Ազդակ» օրաթերթը կը մատուցէ առարկայական լրատուութիւն

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդինքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներն 24-ը (10,39 առ հարիւր) ընտրած ե «Հատ համաձայն եմ» պատասխանը, 93-ը (40,26 առ հարիւր)` «Համաձայն եմ», 34-ը (14,72 առ հարիւր)` «Կողմանորոշուած չեմ», 66-ը (28,57 առ հարիւր)` «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 14-ը (6,06 առ հարիւր)` «Բնաւ համաձայն չեմ»:

«Ազդակ» օրաթերթը կը մատուցէ առարկայական լրատուութիւն

6.06%

10.39%

28.57%

14.72%

40.26%

- Հատ համաձայն եմ
- Որոշ չափով համաձայն եմ
- Կողմանորոշուած չեմ
- Բնաւ համաձայն չեմ

Զ. «Ազդակ»-ի բջիջային ծրագիրը պետք ունի արդիականացման

Այս հարցումին պատասխանած են այն 108 մասնակիցները, որոնք իրենց բջիջային հեռածայններուն վրայ ներբեռնած են «Ազդակ»-ի բջիջային հեռածայնի ծրագիրը: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդինքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.



Հոս Գլխաւոր Լուրեր Հայկական Լիբանաս



Նախագահական Ընտրութեան
Անդրանիկ Նիստը Շառայեց
Բաևեռաևսնեռն Շօաւիենու
September 30, 2022




«Ինչո՞ւ Իբրեւ Քրիստոնեաներ
Հանրապետութեան Նախագահի
Մո Շուո Չենք Կոնառ
September 29, 2022

ԱԶԳԱՅԻՆ ՄԸ


Կը մասնակցի այս թիվին իրատարակութեան

**«Ազդակ»-ի բջիջային ծրագիրը
պետք ունի արդիականացման**



Ե. «Ազդակ»-ի մեջ բաւարար չափով ուսումնասիրական/հետազոտական յօդուածներ կան

**«Ազդակ»-ի մեջ բաւարար չափով
ուսումնասիրական/հետազոտական
յօդուածներ կան**



108 մասնակիցներն էն 20-ը (18,52 առ հարիւր) ընտրած է «Ծատ համաձայն եմ» պատասխանը, 47-ը (43,52 առ հարիւր)՝ «Համաձայն եմ», 24-ը (22,22 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 15-ը (13,89 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մասցեալ 2-ը (1,85 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:



High Quality Sleep Provider

Shop Online **bed-bed.com**



961 1 510 632

12

ԱԶԴԱԿ

DAVOYAN DIAMONDS

www.davcodiamonds.com

+961 1 881881

ԱԶԴԱԿ


Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներէն 12-ը (5,19 առ հարիւր) ընտրած է «Շատ համաձայն եմ» պատասխանը, 69-ը (29,87 առ հարիւր)՝ «Համաձայն եմ», 33-ը (14,29 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 87-ը (37,66 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 30-ը (12,99 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:

Ը. «Ազդակ»-ը կը կարդաս հաճոյքով

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Ազդակ»-ը կը կարդաս հաճոյքով



231 մասնակիցներէն 58-ը (25,11 առ հարիւր) ընտրած է «Շատ համաձայն եմ» պատասխանը, 128-ը (55,41 առ հարիւր)՝ «Համաձայն եմ», 8-ը (3,46 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 35-ը (15,15 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 2-ը (0,87 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:


Թ. «Ազդակ»-ի տրամադրած լուրերուն կը վստահիս

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Հարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներէն 53-ը (22,94 առ հարիւր) ընտրած է

«Ազդակ»-ի տրամադրած լուրերուն կը վստահիս

2.16%



«Շատ համաձայն եմ» պատասխանը, 115-ը (49,78 առ հարիւր)՝ «Համաձայն եմ», 16-ը (6,93 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 42-ը (18,19 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 5-ը (2,16 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:



+961 1 252052



+961 79 102194

Sales@gbsco.com




www.gbsco.com

Ժ. «Ազդակ»-ը տարիքի համապատասխան յօդուած-ներ/Նիւթեր կը տրամադրէ

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

«Ազդակ»-ը տարիքի համապատասխան յօդուածներ/Նիւթեր կը տրամադրէ



231 մասնակիցներն են 26-ը (11,26 առ հարիւր)՝ ընտրած են «Ծատ համաձայն Եմ», 50-ը (50,65 առ հարիւր)՝ «Համաձայն Եմ», 19-ը (8,23 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 65-ը (28,14 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն Եմ», իսկ մնացեալ 4-ը (1,73 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:

Աւելի յստակ պատկեր մը ներկայացնելու համար «Կողմնորոշուած չեմ» պատասխանող մասնակիցները դուրս ճգելեն:

Գետ-Գիտութեան

Օ ԱՐԴԱՐԱՐԻ 20.2022 Շ 0



- Ձեր Մարմինը Ռանի Խեցացի Միջոց Մր՝ Պարզեցու, Թէ Որքան Զոր Պէտք է Խմբէ Ամէն Օր-Զարմանայի Բաներ, Որոնք Կրնան Շաղանացնեց Ձեր Արևան Ծնունդ Պատրաստը՝ ԲՌԱՍ Խրցեւն Ձեր Մարմինը Ռանի Խեցացի Միջոց Մր՝ Պարզեցու, Թէ Որքան Զոր Պէտք է Խմբէ Ամէն Օր Լոյց հարցում. Ամէնորեան որքան չոր անհրաժեշտ է միջին շափառան մարդուն: Հասանաբար լսած էք տովորակն պատասխանը. որ գասար ուր...

Պատերազմի Եւ Խաղաղութեան Գինը

Օ ԱՐԴԱՐԱՐԻ 19.2022 Շ 0



ՏԻՐՈԱՆ ԾԽՆՊԱՇԵԱՆ Երեշարքի, 13 մետրմերի վաղ առաւտուն, ժամ 00:05-ին սկսած ազրայեանական արձանական հայտանութիւն հայտանութիւն վրայ տեսնեց մօնաւրապէց երկրո ու ողաբեքաց առանց որեւէ գրաւոր գիշարող սարսարութեան: Տարձալումը տեղի ունեցաւ սահմանային վեց ճականներու վրայ միաժամանակավ: Վեց ճականներէն երերին պարագայն ունեցաւ հոգային կորուսներ, որուցօք մեկը՝ Ձերմունի շրջակին մէջ, ծասպուն: Ազրպէճանական ուժերը այժմ կը գտնուին Ձերմունին միայն շրջանկէն թիվութեան հետարորդական վրայ, կորսեցուած ենք 8,5...

Պատերազմի Քաղաքականութիւն

Օ ԱՐԴԱՐԱՐԻ 18.2022 Շ 0



ՅԱԿՈՐ ԱԱԾԵԱՆ Հայաստան մօտա պատերազմի իրավիճակի մէջ: Կրնայ ուրալ, որ այս իրավիճակը շարժմական լույս, կրնայ ուրալ, որ այս իրավիճակը երկարի, կրնայ ուրալ ու պատերազմ, ոչ խասադրութիւն վաստ անբաղանդ գեց ժողովուրդին, բանակին և քաղաքական կենցին վրայ՝ Հայաստան՝ տարածարյացի վորորիին մէկ մասը ուրալով, կը բոյի, որ դժուար տարիներու հորիզոնի մը դէմ յանդիման է, ուստի ազգովին պէտք է իրագել:

Ետք, մնացեալ մասնակցողները բաժնեցինք երկու խումբի: Առաջին խումբը «Ծատ համաձայն Եմ» եւ «Համաձայն Եմ» պատասխանները ընտրողները, իսկ երկրորդը՝ «Որոշ չափով համաձայն Եմ» եւ «Բնաւ համաձայն չեմ» պատասխանները ընտրողները: Ապա ուսումնասիրեցինք իւրաքանչիւր խումբի տարիքային բաժանումները, որպեսզի հասկնանք, թէ ո՞ր տարիքային խմբաւորումներուն գոհացում կու տան «Ազդակ»-ի մէջ լոյս տեսած յօդուածներն ու նիւթերը:

Առաջին խումբին մաս կը կազմեն 143 մասնակիցներ, որոնք համաձայն/շատ համաձայն են, որ իրենց տարիքին համապատասխան յօդուածներ լոյս կը տեսնեն «Ազդակ»-ի մէջ: Այս 143 մասնակիցներն 68-ը (47,55 առ հարիւր) 56 տարեկանն է, 58-ը (40,55 առ հարիւր) 36-55 տարեկան է, իսկ մնացեալ 17-ը (11,89 առ հարիւր)՝ 17-35 տարեկան:

Երկրորդ խումբին մաս կը կազմեն 69 մասնակիցներ, որոնք որոշ չափով համաձայն են կամ թսաւ համաձայն չեն, որ «Ազդակ»-ի մէջ իրենց տարիքին համապատասխան յօդուածներ կամ նիւթեր կը հրատարակուին: Այս 69 մասնակիցներն 29-ը (42,03 առ հարիւր) 56 տարեկանն է, 25-ը (36,23 առ հարիւր) 36-55 տարեկան է, իսկ մնացեալ 15-ը (21,74 առ հարիւր)՝ 17-35 տարեկան:

Your favourite lahmadjun

Ichkhanian

traditional bakery since 1946

Zalka Branch

monday to saturday
from 9:00 till 16:00

Asaad Rachid Street
Mafra' Byblos Bank
Grand Park Building

for delivery and take-away
call: +961 4 71 75 86
+961 71 11 77 76

Beirut Branch

tuesday to sunday
from 9:00 till 15:00

Hussein Beyhum Street
Zokak el-Blat,
Zoughbi Building

for delivery and take-away
call: +961 1 37 51 78
+961 3 21 60 12

ՃՐԵՂ ԲՆԱԿԱՐԱՎՆԵՐ

(առանձնապուն)


Երեւան - Եղուարդի շրջան
800 քառ. մետր հողաշերպ
Ներառեալ՝ 122 քառ. մետր շինութիւն:
Յասցէ դիմել՝ Ֆեռ: + 96 13667696 թիւին
կամ e-mail: mardotavitian@gmail.com



ԱԶԴԱԿ

ԺԱ. «Ազդակ»-ը տարբեր կարծիքներու տեղ կու տայ իր թիւներուն մէջ

«Ազդակ»-ը տարբեր կարծիքներու տեղ կու տայ իր թիւներուն մէջ



Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Յարցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներին 13-ը (5,63 առ հարիւր) ընտրած է «Շատ համաձայն եմ» պատասխանը, 73-ը (31,60 առ հարիւր)՝ «Չամաձայն եմ», 41-ը (17,75 առ հարիւր)՝ «Կողմնորոշուած չեմ», 81-ը (35,06 առ հարիւր)՝ «Որոշ չափով համաձայն եմ», իսկ մնացեալ 23-ը (9,96 առ հարիւր)՝ «Բնաւ համաձայն չեմ»:

17. Աղօանց տարբերակը վճարովի դառնալու պարագային տակաւին կը շարունակե՞ս կարդալ եւ կը դառնա՞ս բաժանորդ

Այս հարցումին պատասխանած են 231 մասնակիցներ: Որէս պատասխան՝ կարելի էր ընտրել «Այո» կամ «Ոչ»: Յար-



**Jack
Gifts**
ACCESSORIES

Gifts to Your Door!

Shop Online Now


Jack Gifts Accessories

jackgifts

70-606992

www.jackgiftsonline.com

Առցանց տարբերակը վճարովի դաշնալու պարագային տակաւին կը շարունակե՞ս կարդալ եւ կը դաշնա՞ս բաժանորդ



ցախոյզին աւարտին մասնակիցներու պատասխաններուն արդիւնքը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

231 մասնակիցներէն 40-ը (17,32 առ հարիւր) ընտրած է «Այս» պատասխանը, իսկ 191-ը (82,68 առ հարիւր)` «Ոչ»:

18. Ի՞նչ այլ առաջարկներ ունիս «Ազդակ»-ին

Այս հարցումին պատասխանելը պարտադիր չէր, սակայն աւելի քան 90 մասնակիցներ գրած էին իրենց կարծիքները: Ստորեւ կ'ամփոփենք ամենն շատ կրկնուած գաղափարները:

Մասնակիցներուն մեջ կայ զգալի թիւ մը, որ կը խօսի առցանց տարբերակի շուրջ յատուկ աշխատանք տանելու մասին: Ըստ անոնց առաջարկներուն, պետք է աւելի կեդրոնալու

առցանց տարբերակին վրայ: Առաւել եւս, պետք է արդիականացնել բժիշային ծրագիրը: Ըստ հարցախոյզին մեջ տեղ գտած առաջարկներուն, պետք է օրաթերթին տևորենութիւնը յստակ որոշէ, թէ «Ազդակ»-ի թիրախը ո՞վ է: Եթէ օրաթերթին թիրախը միայն լիբանանահայութիւնն է, ապա պետք է բժիշային հեռածայնի միջոցով տրամադրուած արագ լրահոսի լուրերը մնան այսպէս, ինչպէս որ են: Սակայն, նկատի առնելով, որ «Ազդակ»-ը դարձած է աշխարհի չորս կողմը գտնուող հայերու առօրեայէն բաժին մը եւ քաջ գիտակցելով, որ անոնց համար հաճելի պիտի չըլլայ բժիշային ծրագիր մը, որուն արագ լրահոսը միայն կը կեդրոնանայ ներգաղութային եւ ներլիբանանեան ձեռնարկներու վրայ, Notification-ներու միջոցով պետք է նաեւ անդրադառնալ միջազգային՝ այդ հաւաքականութեան համար հետաքրքրական լուրերու, տարբեր գաղութներու լուրերուն եւ երիտասարդութիւնը հետաքրքրող լուրերու: Notification-ները իրենց կարգին կարելի է օգտագործել տարբեր նպատակներու համար, օրինակ՝ անոնց միջոցով կարելի է donation-ի յղումը ուղարկել, մասնաւանդ Լիբանանեն դուրս գտնուող հետեւորդներէն օժանդակութիւն ստանալու համար՝ նկատի առնելով Լիբանանի մեջ առկա տնտեսական տագնապը: Բժիշային ծրագիրը ռազմավարական շատ կարեւոր նշանակութիւն ունի եւ պետք է օգտուիլ անկէ:

Ներկայացուած նիւթերը պետք է կարծիքներու բախում յառաջացնեն: Այս գաղափարը արծարծած են աւելի քան 30 մասնակիցներ՝ կարեւոր նկատելով տարբեր կարծիքներու առկայութիւնը օրաթերթին մեջ լոյս տեսնող յօդուածներուն մեջ:

Առաջարկներուն մեջ նաեւ զգալի էր «Ազդակ»-ի մեջ գրական բաժինի մը ստեղծման պահանջը:

Նորարարութեան վերնագիրին տակ նաեւ առաջարկներ եղան թուայնացնել եւ առցանց խաղի վերածել «Ազդակ»-ի խաչքառներու հաւաքածոն: Կարելի է նոյնիսկ առանձին բժիշային ծրագիրի մը վերածել՝ նկատի ունենալով, որ արեւմը-տահայերենով նման քան չկայ:

Վերջապէս, մասնակիցներուն մեծ մասը առաջարկ ներկայացուցած է, որ յաճախ կատարուին նման հարցախոյզեր՝ ոչ անպայման կեդրոնանալով «Ազդակ»-ի գործունեութեան վրայ, այլ նաեւ՝ ազգային, գաղութային, մշակութային եւ երիտասարդութիւնը յուզող հարցերու վրայ:



— Resto —
Ghazar

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
ՀԵՌ. 01-242708

ԱՆԹԻԼԻԱ,
ՀԵՌ. 04-408060

Hotline: + 961-1-258852
Mobile: + 961-3-148248
+ 961-3-881944



E-mail: info@polo-travel.com
www.polo-travel.com
Bourj Hammoud
Tripoly Street
Harboyan Trade Center
Ground Flr.